ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ՍՄԿԿ 20-րդ համագումարը մեր պատմաբանների առջև կարևորագույն խնդիր է դրել՝ ստեղծել լիարժեք աշխատություններ սովետական հասարակարգի, կոլտնտեսային գյուղացիության, մտավորականության և հատկապես բանվոր դասակարգի պատմության մասին։ Գրել մարդկային հասարակության ամենափառապանծ, ամենաառաջադեմ, կառուցող ու ստեղծագործող դասակարգի, բանվոր դասակարգի պատմությունը, լուսաբանել նրա հերոսական գործունեությունը, ցույց տալ նրա գրաված տեղն ու դիրքը, մեծ պատիվ կբերի պատմաբանին։ Այդպիսի գրքերի անհրաժեշտությունը վաղուց էր զգացվում։ Այդ տեսանկյունից ելնելով՝ պետք է նշել, որ խրախուսանքի արժանի քայլ է կատարել պատմական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Գրիգորյանցը՝ հրատարակելով Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի մասին իր աշխատությունը[1]։

Արխիվային հարուստ նյութերի ու փաստերի վերլուծմամբ, և բանվորների հետ ունեցած իր անձնական հանդիպումներից ստացած տպավորությունների հիման վրա հեղինակը փորձում է լուսաբանել Սովետական Միության հերոսական բանվոր դասակարգի լավագույն ջոկատներից մեկի՝ Հայաստանի բանվոր դասակարգի դերն ու գործունեությունը սոցիալիզմի կառուցման ասպարեզում։

Գրքում արժանի տեղ են գրավել և առավել հաջող է ցույց արվել բանվոր դասակարգի հերոսական աշխատանքն ու ավանգարդային դերը՝ նախապատերազմյան հնգամյակների, Հայրենական Մեծ պատերազմի ու հետպատերազմյան ժամանակաշրջաններում։ Հատկապես հետաքրքիր ու արժեքավոր են գրքի այն էջերը, որոնք պատմում են սոցիալիստական աշխատանքի հերոսների, առաջավոր բանվորների, նորարարների մասին։

Աշխատությունը բաղկացած է առաջաբանից և 9 գլխից։ Նրա մեջ զետեղված են նաև մի շարք լուսանկարներ։

Նկարագրելով նախառևոլյուցիոն Հայաստանի բանվորների ծանր վիճակը, հեղինակը միաժամանակ ցույց է տալիս Սովետական շրջանի բանվորների քանակական ու որակական աճը, Վ. Ի. Լենինի ցուցումներով, բոլշևիկյան պարտիայի եռանդուն գործունեությամբ՝ Ռուսաստանի ռևոլյուցիոն պրոլետարիատի ինտերնացիոնալ դրոշի շուրջը համախմբվելու պրոցեսը։

Աշխատության մեջ հատկապես ընդգծվում է, որ Սոցիալիստական ռևոլյուցիայով սկսվում է բազմադարյան հայ ժողովրդի վերջնական ազատագրումը, ազգային վերածննդի ու համակողմանի ծաղկման դարաշրջանը։ Այստեղ մեկնաբանվում է Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի գործունեությունը՝ պետության կառավարման, ժողովրդի նողկալի թշնամիների իմպերիալիզմի գործակալ-դաշնակցության հակառևոլյուցիան ոչնչացնելու և երկրի ծայրաստիճան քայքայվածությունը վերացնելու, ժողովրդական տնտեսությունը վերականգնելու ասպարեզում։ Այդ ժամանակ պարտիան Սովետական Հայաստանի ողջ աշխատավորությանը ոտքի է հանում, ինչպես ասված է գրքում, մեջ բերելով ՀԿԿ Կենտկոմի 1921 թ. Մայիսմեկյան կոչից, «Աշխատանքի մեծ պատերազմի... ընդդեմ սովի, ցրտի, աղքատության, քայքայման»։ Հեղինակը փաստերով հաստատում է, որ Սովետական Հայաստանի վերածնության համար Սովետական Ռուսաստանը իր փրկարար ու հզոր բազուկն է պարզում, օգնության ձեռք են մեկնում նաև մյուս եղբայրական ժողովուրդները...

Ռեսպուբլիկայի բանվոր դասակարգի նոր ջոկատի ձևավորման պրոցեսը ցույց է տրրվում սոցիալիստական արդյունաբերության, տրանսպորտի և շինարարության աննախընթաց զարգացման ֆոնի վրա։ Մեր Հայրենիքի ինդուստրացման, էլեկտրիֆիկացման լենինյան պլանը հաջողությամբ էր իրականացվում նաև Սովետական Հայաստանում։ Աշխատության մեջ որոշակի տեղ է հատկացվում այդ պրոբլեմների լուծման ընթացքին։ Հեղինակը կոնկրետ փաստերով ցույց է տալիս ռեսպուբլիկայի բանվորների և ողջ աշխատավորության սխրագործությունը հնգամյա պլանների իրականացման սոցիալիզմի կառուցման ճակատում։ Միաժամանակ մերկացնում է մեր թշնամիների, մասնավորապես դաշնակցական թափթփուկների նենգությունն ու չարախնդրությունը. նրանք ճգնում էին ապացուցել, որ իբր թե առաջին հնգամյակը բոլշևիկյան ֆանտազիա է, սակայն կյանքը հերքելով այդ զրպարտանքը՝ հաստատեց լենինյան պարտիայի կանխագծումների ճշմարիտ ու ռեալ լինելը։ Թերկրալի է, երբ տեսնում ու զգում ես, թե ինչպես պատմության մի ակնթարթում, մի սերնդի ու լրիվ կյանքի ընթացքում՝ խղճուկ արդյունաբերություն ու տեխնիկա ունեցող, նախնադարյան արորի Հայաստանը դառնում է առա-

---

[1] Ա. Կ. Գրիգորյանց, «Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում», Հայպետհրատ, Երևան, 1960 թ.։

յավոր տեխնիկայով զինված, հզոր էներդետիկ բազա ունեցող սոցիալիստական ինդուստրիալ զարգացած գյուղատնտեսության, ծաղկած կուլտուրայի Լենինի շքանշանակիր ռեսպուբլիկա։

Ա. Կ. Գրիգորյանը կոնկրետ փաստերով նշում է, որ սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում՝ արդյունաբերության բուռն զարգացմանը համընթաց և՛ քանակապես, և՛ որակապես աճում է բանվոր դասակարգը։ Այսպես, եթե 1923 թվականին ռեսպուբլիկայում հաշվվում էր 2776 բանվոր և ծառայող, ապա այժմ Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ ընդգրկված են ավելի քան 406 հազար բանվորներ և ծառայողներ (էջեր 33, 120, 241)։

Աշխատության հեղինակը հատուկ ուշադրություն է նվիրում կոմունիստական աշխատանքի մեթոդների քննարկմանը։ Վ. Ի. Լենինը բարձր էր գնահատում սոցիալիստական մրցության դերն ու նշանակությունը կոմունիզմի կառուցման գործում։ Նա այդ մրցության կարևորագույն սկզբունքներն էր համարում. առաջին՝ ընկերական փոխօգնությունը և աջակցությունը. երկրորդ՝ առաջավոր փորձի և աշխատանքի պրոգրեսիվ մեթոդների փոխանակումը. երրորդ՝ մրցության հրապարակայնության և ձեռք բերած արդյունքների համեմատման ապահովումը։ Ալ. Գրիգորյանցը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս Հայկական ՍՍՌ-ում լենինյան ցուցումների իրականացման պատկերը։ Նա ընդգծում է աշխատանքի արտադրողականության բարձրացման այն ցուցանիշները, որոնք ձեռք են բերել բանվորներն ու ինժեներա-տեխնիկական անձնակազմը և՛ լեռնագործության ու մեքենաշինության, և՛ քիմիական ու տեքստիլ, և՛ էլեկտրակայանների շինարարության ու տրանսպորտի, և՛ սննդի ու շինարարության, և՛ արդյունաբերության մյուս ճյուղերում։

Կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանում առանձնապես վառ կերպով դրսևորվում է սոցիալիստական մրցության նոր ձևերից մեկը՝ մրցությունը ռեսպուբլիկաների, նրանց քաղաքների, շրջանների, առանձին արտադրական ձեռնարկությունների, սովխոզների, կոլտնտեսությունների միջև։ Այսպես. Հայկական ՍՍՌ և Տաջիկական ՍՍՌ արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվների, Երևանի և Կիևի, Լենինականի և Կիրովաբադի, Կիրովականի և Բաթումիի աշխատավորների միջև ծավալվող սոցիալիստական մրցությունը հանդիսանում է լենինյան սկզբունքների մարմնավորումը կյանքում։ Աշխատանքի կոմունիստական մեթոդների մասսայական կիրառման շնորհիվ օրեցօր ամրապնդվում է մեր մեծ Հայրենիքի բազմազգ ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամությունը։

Աշխատության հեղինակը տասնյակ էջեր է նվիրում սոցիալիստական աշխատանքի հերոսներին, արտադրության առաջավորներին, նորարարներին, ռացիոնալիզատորներին, որոնք ծընվում, աճում ու հանրահայտ են դառնում հայրենանվեր ու անձնուրաց աշխատանքի բովում, որոնց համար կենցաղ է դառնում՝ ապրել և աշխատել կոմունիստաբար։ սկզբունքը։ Գրքում հիշատակվել են մեր Սոցիալիստական Աշխատանքի հերոսներ՝ Աշոտ Մելքոնյանի (Լափանի հանքեր), Սերգեյ Ամիրխանյանի (Երևանի Կիրովի անվան գործարան), մեքենավար Ալեքսանդրի Խաչատրյանի, Աստղիկ Պետրոսյանի (Լենինականի Տեքստիլ կոմբինատ), անվանի շինարար Խաչատուր Կոշկակարյանի անունները։ Արդեն երկրին հայտնի են դարձել էլեկտրակայանների աչքի ընկնող շինարար-բանվորներ՝ Ֆետիսովը, Հ. Գրիգորյանը (Քանաքեռգես), Վերա Սիվաշենկոն (Սևանգես), Շամլուղի հանքափորներ՝ Ն. Ֆիոֆանովը, Դ. Հասանովը և ուրիշներ։ Պատշաճ տեղ է տրված Հայաստանում դազանովյան շարժման պիոներներին՝ Բարկեն Նավասարդյանին (Երևանի Այլյումինի գործարան), Սերյոժա Գասպարյանին (Լենինականի Տեքստիլ կոմբինատ), Վարսիկ Գասպարյանին (Երևանի № 1 կարի ֆաբրիկա)։

Բանվորների նյութական բարեկեցության, բնակարանային-կենցաղային պայմանների արմատական բարելավման, նրանց կուլտուրական-տեխնիկական մակարդակի բարձրացման հարցերի քննարկմանը՝ հեղինակը մեծ ուշադրություն է նվիրում։

Գրքում ամբողջական գլուխներ կան, որոնք պատմում են բանվորների ու գյուղացիների պայքարի ամրապնդման, Հայրենական Մեծ պատերազմին՝ Հայաստանի բանվոր դասակարգի հերոսական մասնակցության, կոմունիզմի կառուցման վեհ գործում նրա աշխատանքային սխրագործության մասին։

Ընդգծվում է ՍՄԿԿ XXI համագումարի՝ որպես կոմունիզմի ծավալուն կառուցման համագումարի պատմական նշանակությունը։ Յայտուն օրինակներով ցույց է արվում հայ ժողովրդի ոգեշունչ ու քաջարի աշխատանքը՝ յոթնամյակի պլանները ժամկետից շուտ կատարելու, մեր Հայրենիքի հետագա բարգավաճման գործում իր արժանի ավանդը ներդնելու համար։

Աշխատության միջով, սկզբից մինչև վերջ ընդգծվում է ՍՄԿԿ և նրա լենինյան ղեկավար՝ Հայաստանի Կոմպարտիայի ղեկավար և ուղղություն տվող դերը։

Ալ. Գրիգորյանցի ուսումնասիրությունը հետաքրքիր ու արժեքավոր է։ Նա գրված է պարզ ու պատկերավոր լեզվով։ Սակայն, չնայած դրան, գիրքը զերծ չէ նաև թերություններից։ Այս-

պես, ցույց չի արվում Անդրկովկասյան ֆեդերացիայի ժամանակաշրջանում Հայաստանի բանվոր դասակարգի ինտերնացիոնալ համերաշխությունը եղբայրական Վրաստանի և Ադրբեջանի բանվորների հետ։ Չի նշվում Անդրֆեդերացիայի վիթխարի դերը երկրամասի, և մասնավորապես Հայաստանի ինդուստրացման գործում։ Խոսելով բանվորների ու գյուղացիների դաշինքի մասին միայն կոլեկտիվային շարժման ընթացքում, հեղինակը անհրաժեշտ ուշադրություն չի դարձրել այդ դաշինքի ամրապնդման հարցերի քննարկմանը, մեր հասարակության զարգացման մյուս էտապներում։ Նրա տեսադաշտից դուրս չպետք է մնային նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են ինժեներա-տեխնիկական անձնակազմի ձևավորումը արտադրության պրոցեսում՝ ուսման հետ զուգակցված, բանվորների վճռական դերը անցյալի մնացուկների, հակահասարակական երևույթների դեմ պայքարի ու դրանց հաղթահարման ասպարեզում, բանվոր-երիտասարդության շրջանում տարվող բարոյա-քաղաքական դաստիարակության խնդիրները։

Հ. Թ. ՍԱՀԱԿՅԱՆ